Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի գյուղապետարան

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 - 32 - 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

№ԼՄԼՀ025/99

« 13 » 10 2014 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի գյուղապետի թիվ 25, 26, 27 որոշումները, թիվ 12, 13, 14, 15 կարգադրությունները և ավագանու թիվ 14, 15, 16 որոշումները:

Առդիր 10 թերթ:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 22 » 09 2014թ.

հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» օրենքի 8-րդ հոդվածով,

Որոշում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի զորահավաքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

«02» 10 2014թ

հեռ 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 06.12.2013թ-ի թիվ 20-Ն որոշումը.

Որոշում եմ՝

Թույլատրել անհատ ձեռնարկատերեր՝ Վալյա Վարդանի Գևորգյանին /հարկ. կոդ՝ 66890857/, Անժելա Գրիշայի Խաչիկյանին /հարկ. կոդ՝ 66006801/ և Կարեն Մարտիկի Վիրաբյանին /հարկ. կոդ՝ 66894746/ Լեռնանցք համայնքում գործող իրենց առևտրի օբյեկտներում 2014թ-ի չորրորդ եռամսյակում իրականացնել ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

«09» 10 2014թ.

հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 43 հոդվածի 2-րդ կետով. Լեռնանցք համայնքի 2014թ-ի բյուջեից համայնքի հետևյալ անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝

1. 4729 հոդվածի 10/07/01 ենթախմբից - 80000 (ութսուն հազար ) դրամ որպես սոց. օգնություն.
2. 4729 հոդվածի 10/04/01 ենթախմբից - 20000 (քսան հազար) դրամ /ընտանիքի անդամներ և զավակներ/.

1. Մացակյան Հրուշ – 15000 (տասնհինգ հազար) դրամ
2. Աբրահամյան Լյուդմիլա – 20000 (քսան հազար) դրամ
3. Մելիքսեթյան Ազատ – 10000 (տասն հազար) դրամ
4. Դարչինյան Վարդանուշ – 15000 (տասնհինգ հազար) դրամ
5. Մելոյան Արթուր – 20000 (քսան հազար) դրամ
6. Դանիելյան Աստղիկ – 10000 (տասն հազար) դրամ
7. Մարտիրոսյան Կարինե – 10000 (տասն հազար) դրամ

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 22» 09 . 2014թ.

հեռ. 093-32-22-39

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Ղեկավարվելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի պահանջներով. Լեռնանցք համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով՝

1. Ստեղծել ԼՄԼԳ - ՊԸԱՇՁԲ - 29 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

   1. Լևիկ Արգարյան - համայնքի ղեկավար (հանձնաժողովի նախագահ)
   2. Մարտիկ Վիրաբյան - համայնքի ղեկավարի տեղակալ
   3. Գայանե Վարդանյան - առաջին կարգի մասնագետ
   4. Արաքսյա Մացակյան - առաջատար մասնագետ – հաշվապահ
   5. Ս. Վարդանյան - ավագանու անդամ

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել գյուղապետի տեղակալ Մ. Վիրաբյանին:
3. Սահմանել, որ հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա ս. թ. հոկտեմբերի 06-ին, ժամը $14^{00}$-ին, գյուղապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ գ. Լեռնանցք 11 փող. թիվ 35:
4. Գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Սույն կարգադրության կատարման հսկողության իրականացման պարտականությունը դնել գյուղապետի տեղակալ Մ. Վիրաբյանի վրա:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Արգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

---

«01» 10 2014թ.

հեռ 093-32-22-39

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՆԱՀԻՏ ՄԵԼՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 158, 159 և 161 հոդվածներով և ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անահիտ Մելոյանի դիմումը.

1. Գյուղապետարանի առաջատար մասնագետ Անահիտ Մելոյանին 2014թ-ի հոկտեմբերի 01-ից տրամադրել իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդը՝ 20+4 աշխատանքային օր:
2. Աշխատանքի մեջ համարել 2014թ-ի նոյեմբերի 04-ից:

Համայնքի գյուղապետ՝ Լ. Արգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

---

« 03 » 10 2014թ. հեռ. 093-32-22-39

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

### ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 220 հոդվածով և համայնքային ծառայության 32 հոդվածով, Լեռնանցք համայնքի գյուղապետարանի աշխատող՝ առաջատար մասնագետ Գևորգ Վարդանյանին աշխատանքային կարգապահության խախտման համար տալ նախազգուշացում:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Արգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 09 » 10 2014թ. հեռ 093-32-22-39

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014թ-ի հոկտեմբերի 09-ին ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավար Լևիկ Արգարյանին գործուղել ք. Երևան՝ «Սի Փի ԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ 2 օր ժամանակով:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Արգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«10» 10 2014թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 3-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին կետի և 69-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Ս. Բաղալյան | | | |
| Ա. Գևորգյան | | | |
| Ա. Չախոյան | | | |
| Ս. Վարդանյան | | | |

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«10» 10 2014 թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 51-րդ հոդվածով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի սեփականություն հանդիսացող 06-040-0028-0001 ծածկագրի, 0,1039 հա հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և մեկնարկային գին սահմանել հողի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 1քմ-ի համար 222 դրամ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Բադալյան | | | |
| Ա. Գևորգյան | | | |
| Ա. Չախոյան | | | |
| Ս. Վարդանյան | | | |

Համայնքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«10» 10 2014 թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետով (զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում) դադարեցնել Լեռնանցք համայնքի ավագանու անդամ Նարեկ Ոսկանի Մելոյանի լիազորությունները:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Բադալյան | (ստորագրություն) | | |
| Ա. Գևորգյան | (ստորագրություն) | | |
| Ա. Չախոյան | (ստորագրություն) | | |
| Ս. Վարդանյան | (ստորագրություն) | | |

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան